

891.381+947.925 7

Ն Շ Խ Ա Ր Ք

ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԹԱՐԴ

ՄԱՆՈՒԹԻՒՆՔ ՆԱԽՆԻ

ՄԱՏԵՆԱԳՐԱՅ

A 21494



ՅԵՐՈՒՍԱԼԵՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԲՈՅՑ ՅԱԿՈՎԵԱՆՑ

Ի ՀԱՅՐ ԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Ա. ԷԶՄԻԱԾՆԻ

Տ. Տ. ԳԵՂՐԴԱՅ

ՎԵՀԱՓԱՌ Ս. ԿԱԹՈՒԴԻԿՈՍԻ

ՀՐԱՄԱՆԱԿ

ՊԱՏՐԻԱՐՔԻ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱԼԵՄԻ

Տ. ԵՍԱՅԵԼՅ

ՄՐԲԱՋԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ. ՊՈԼՍՈՅ

Տ. ՄԿՐՏՉԻ

ՄՐԲԱՋԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ուստե՛ւ և պարունակած լինամայն 'ի հին' ոչ ժողով
շինանութիւն քաջեղին պատճե չայիսա , այլ և պա-
րագանագութիւն իսկ նորին և պատճենիւնն 'ի ովտա-
նե , իսուառ ջնջեցին ցերիէ ՚ի հուր դարձաւ . պար-
ունական իսկ պէնսա այսօր չայ դարձաւիւն , վերա-
խունել գունեա ըղբէրմանիւն նախաւոյն իւր դասաւ 'ի
սկսած կարան արյանական' որ երայնակեացն և զիւան-
նարդիսն : Արդիւս մինչև սարդ . այսուն և յարայս ու-
խու ե գիս և հայու լրաւն պէնսանոց դպրութիւնն չայ-
իսիսն . այլ միայն բառականակի դուռս միմիւրիւ 'ի ըս-
տուան 'ի գիւր ինչ ինչ նշխարաց չայիսիսնի Ա'ա-
պէնսագութիւնն . պար անիւնջ ջան և անբասիր ագաճն
ոմանց մերոց գրասիրաց 'Նախահարց' 'ի բաց իրշէջին 'ի
հրոյն դափնանէ 'ի հալածանն անդ անխուսակելի յան-
ձուաւութիւնն խանդակալ ըլքին մշեաւ : Ուստե՛ւ այսօ-
րին ՚Նախարց մասյորդի մասինից նորին են որ լուսա-
ւորչն պահիուն Աշճիս և լուսաւորչեացն յարադայս ,
ուսիշաբանն ըլքիութեաւ 'ի սիրու նորուն զարութեանց
'Նախահարց և ըղբէրմանիւնն :

Աւ 'ի արյանագրեւ 'ի ամու պայտակախ Շահարա
Մասպէնագութիւնն չայիսիսն , 'ի խորհուրդ մշեաւ
ուխտի մասանութիւնն Արքոց Յակովէինց , յէւն 'ի
հործ արէ արարագրեւ ընօւնարքս ՀԱՅ ՄԱՏԵՆԱ-
ԳՐՈՒԹԵԱՆ յանիորուսոր նաև բանասիրաց Աշճիս
և աղուգայ մանիսն . որ և հասոր հասոր 'ի լոյս ըն-
ծայէսի օրբանք ներեսուն ժամանակն , և 'ի չեղու բեր-
սուս հետունեակ յայստիսաւ արժանաւոր նախունց և յօ-
դուածոյ Մատունոցը բութիւնն :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Թ Ա Թ Ա Ր Ա Ց

ՎԱՐԴԱՆԱՑ ՊԱՏՄՉԻ

ՀԱՆԵԱԼ Ի ԶԵՐԱԳԻՐ ՕՐԻՆԱԿԱՑ
ԹԱՆԴԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԵԱՆՑ



ՅԵՐՈՒՍԱԼԵՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԵԱՆՑ

СИДОРОВА

И ПОДАРЮ

ИДЕЯ ВЫСТАВКИ
СИДОРОВА ФЕРМЫ А. МИЛЛЕР
ПРИЧИНОЮ ОБРАЗОВАНИЯ



СИДОРОВА

СИДОРОВА ВЫСТАВКА А. МИЛЛЕР

— 35 —

ՅԱՌԱՋԱԲՈՒՆ

Առաջային հասկուր շավարապաշտ չայ մարդուագրու-
թան , քութամք 'ի լոյս ընծայէլ , որ պատմէ շժամբ-
մանէն և զբարուիլ և պատերազմաց թափառաց : Եւ
գրեալ է Վարդանայ պատմնի յաշովերպայն Վանա-
կանայ Վարդանուորի 'ի ձ.դ. դարու . 'ի 1247 և ընդօ-
րինավեալ 'ի 1272 . և օրինակն պը ունին 'ի Յան-
ցեամագիր է նորին զ-ընդույլ երիւու Ավան անապա-
ռի 'ի Կիւհիւա : Օքնուին սունի տառանցին յիշարախա-
րու սպրողին . ասիայն 'ի լուսանայ օքնուին ուրիշ ու-
րու անսանի գրեալ նորին Յեամագրով “Ուրբիտ” աւել ,
Վարդանայ ծառապայն ու : “Նա եւս” իիշ է օրինակն
Սիկույթի Աստրաց վայրութիւնուի Ժամանակագրու-
թան , որ յայրի թարգմանութիւնն է նորին Վարդա-
նայ 'ի յիշարախառանին ծառապայն : Եւ ընդու և ըն-
դայն պատմութեանն իսկ վեայէն պահ նորին լինել հե-
ռվինավեան : Յուրում 'ի պատմութեանն թափառաց
պատմի և ընդույց թագուարութեան : որով և ճանա հա-
մարի պատմութեան հայրու : Զոր 'ի գլուխու գլուխու
բաժննէալ ըստ սանապահութեան պարագայիշն 'ի ամա-
պարմելոց , պամի 'ի պարագրութիւն :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Ա.

Վասն Աջգին Նետոցաց թէ ուստի կամ յորմէ՞
յեցէ տճեցին եւ աիրեցին բացում աշխարհաց
եւ գաւառաց :

Յետ ելանելոյ ասսուածաստեղծ մարդոյն
Ադամաց՝ ի գրախատէն, և պատուիրելոյ անառն
Աստուծոյ քրտնաջան աշխատութեամբ ուստել
հաց զամենացն աւուերս իւր, յաղագս խաբման
կիսջն և գաւառմանութեան սղեղծ օձին, վասն
մոռանալոյ զգեղեցիկ պատուիրանն Աստուծոյ,
և ապա յացնմ՝ հետէ կարօտացաւ բնութիւն
մարդոյն հեշտութեան և մարմնական զբարման :
Խոկ բանսարկուն տատանոյ վասն չար նախանե-
ձուն իւրոյ՝ հանսալալ ուստուցանէր զմարդիկ
գործել զանարժանս . որպէս կայենի՝ զեղբաց-
բասպանս թիւնն, և անօրէն հսկացիցն՝ զյօրա-
նալն՝ ի մեղս և ուսմել զմեւելուին :

Եւ զայս տեսեալ արարիչն բարկացեալ վա-
սըն չար գործոց մարդկանն ջրհեղեղաւ կորցա-
զամենեան . պահելով ուրմն մարդկութեանս

զերանելի արդարն զնոյ : Աւասի յիտ տան
ծննդոյն Նոյի արդարոց , ծնաւ հայրն հաւասոյ
որդին Ռարայի մ. ծն Աբրահամ , որ հայր վե-
րամբարձ անուանեցաւ . վասն զի 'ի ոմանել ու-
րեցան բարում ազգք և աղինք , յաղագս օբհ-
նութեանն Աստուծոյ որ ասացաւ նմա , «բաղ-
մանալ զաւակի նորա իրեւ զաստեզս երկինից
և որպէս զաւալ առ ախն ծովու » : Աւստի և
կատարեցաւն խո' :

Զի յաղատ կիսովն Աբրահամու ծնաւ Խօս-
հակ . և 'ի նմանել Յեսուաւ և Յակովը . և 'ի Յո-
կալքոյ երկատասան նահապեաքն . և մեծ
մարդարէն Դաւիթ . ուստի յայսնեցաւ 'ի տա-
նէ և յաղգամթուէ Դաւիթի Բանն Աստուծ
տէրն մեր Յիսուս Քրիստոս :

Խոկ յաղախնացն Աբրահամու , որ են ա-
նուաներ նոցա միոյն Հագար և միւայն կեն-
դուրոց . 'ի Կենդուրոյ ծնաւ Խմբան , որ են
Պահլաւք . ուստի քաջն Արշակ . և ուուրբն Գը-
րիդոր լուսուորիչն Հայոց . Խոկ 'ի Հագարոյ
Խոմայէլ , որ թարգմանի լուսնն Աստուծոյ ,
ուստի Խոմայէրացիք : Զօր հրամայեաց Աս-
տուծ Աբրահամու 'ի ծննդեանն Խոմայէլի տալ
նմա զգալարտութիւն երկրի , և առնել զնա
յաղդ մեծ . և ձեռք նորա 'ի վերոց թշնամիաց
իւրաց , սրով և աղեղամք աւաւելքան զամե-
նայն աղդս աջաղեալ :

Խոկ Յեսուսոյ յորդւոյն Խասհակայ ծնան
Յեսուսացիք , որ են Սիխոթացիք սեաւք և
վայրագք և այլագէմք . և 'ի նացանէ ծնան Բո-

բամիչք և Աւելիք, որ բնակին ՚ի ծակս և ՚ի
գարսնա, և բազում ոճիրս գործեն:

Եւ ասի թէ Եղանացեցիք այլ՝ի ամա ծնըն-
դոյն են, որ Են ջաւանդք: Աւ.ստի և խառնեալք
՚ի միմեանս երեք աղքս այս Հագարու, Կեն-
դուրայ և Եսաւայ, և ծնաւ ՚ի տոցանէ ծնունդ
այլադէմ աղքեցութեամբ չարին, և անուա-
նեցաւ Տամար, որ ասի սուր և թեթեւ:

Իսկ սուրբն Ներսէս ասէ զսա ՚ի մնացորդա-
ցըն Հագարու, խառնեալ ընդ աղքին Գոլ-
գոս, որ ՚ի Օսրդոմնց, որք ունին զվիկոթիս
մասն Երկրի, որ սկսանի յԱմէլ գետս առ Ե-
մաւօն լերամբն՝ ձգեալ մինչեւ ՚ի ծովի Ասո-
րէց, ուր լնակեալ են աղքք երեսուն և երեք:
որ խժական անուամբ կոչին խուժ և դուժ,
ոյսինքն աղքք առանձնականս: Եւ գլաս որին
սովոնցուն ասի Բուշխ:

Եւ յաղգացն այնոցիկ միոյն ասի Յառաջարք,
զոր կարծեմք թէ այս է, որ ասին Յամթարք:

ԳԼՈՒԽ Բ.

Վասն կեցաւթեան, կրօնից, օրինաց և. գցխա-
ւորի նոցա:

Եւ սրակէս յումանց ՚ի նոցանէ լուսք, ելն
՚ի Յառաջարտան աշխարհէն խրեանց աղքն
այն, և մեկնեցան ՚ի կողմէ ինչ մասին արեւելո-
ւացց, և կոյին անդ աւաղակութեամբ ։ վայ-
րենաբնակիք և յոյժ աղքասոք զբաղւում ժամա-

նակո : Եւ սգաշատն ինչ ոչ ունեին բայց միացն պատկերս թաղեայ , զոր տակաւին կրէին ընդ ի՞քեանս 'ի պէտո կախարդութեան : Բայց ընդ արեգակն զարմանացին , որովհո ընդ զօրութիւն ինչ աստուածացին :

Եւ ապա յանկարծակի ուշաբերեալք , յոյժ նեղեալք 'ի թշուառական և յաղքատ կենացն , կոչեցին յօդնութիւն զԱստուած զարարիչն երկնի և երկրի . և ուխտեցին նմա ուխտ մեծ կալ 'ի հրամանս նորա :

Որոց երեւեալ հրեշտակ հրամանաւն Աստուծոյ 'ի կերպարանս սոկեփետուր արծուոյ , և կոչեալ 'ի ձայն և 'ի բարբառ նոցին լեզուի զգլաւարքն նոցա , որոյ անունն ասիւր Զանեկըզ . և նու երթեալ կոցեալ հանդէոլ արծուակերպ հրեշտակին հեռագոյնս և 'ի բացացա իրեւ նետընկէց մի . և ապա արծիւն ըստ նոցա լեզուին ասաց զամենացն հրամայեալն Աստուծոյ :

Եւ այս է օրէնքն Աստուծոյ , որ եգեալ է 'ի նոսա , զոր անուանեալ են իւրեանքն խառախանուածին՝ որ սիրեն զմիմեանս . երկլարդ՝ մի շնալ . մի գաղանալ . մի սուտ վկացել . մի զօք մատնել . պատուել զծերա և զաղքատու : Եւ եթէ դացի 'ի նոսա յայտիսի մեղանաց , ըստամեցին գործողքն մեղացի :

Եւ մինչ զայս ուսոյց հրեշտակն , ապա կոչեաց զանուն դիմաւորին Դայան . որ և առաջաւ Զանկըզ Դայան կամ Զանկըզ խան : Եւ ասաց հրեշտակն սիրել 'ի վերայ բաղաւմ աշ-

խարհաց և գաւառաց , և բաղմանալ նոցա ան-
թիւ և անհամար բաղմութեամբ , որ և եղեւն
խեկ :

Եւ կատարեցաւ ասոցեալն 'ի տեառնէ , որ-
պէս 'ի ձեռն մարդարէին սպառնայր Աստուած
առելով . թէ « Բաժակ ուկի է 'ի ձեռին իւ-
մում Կարուգադոնասոր , և ում կամիմ ,
սրբացանեմ զնա ո : Այսպէս և այլադէմ ալ-
գըս այս ոչ միայն բաժակ , այլ և միուր գառ-
նութեան հասեալ 'ի վերայ մեր , վասն բաղում
և ազգի ազգի մեղաց մերոց . զի զօրհանապաղ
բարկացուցանեմք զարարիչն Աստուած 'ի գոր-
ծըս մեր : Վասն որոյ զարթուց զառսա տէր
բարկութեամբ առ 'ի խրատել զմել , վասն ոչ
սպահելոց մեր զպատուիրանս նորա :

Գ.ԼՈՒԽ Գ. •

Առաջին դատերացմ թաթարաց շնոր Պարսիկա.
այս շնոր Ացուանս և . շնոր Վիրս . և . դիմա-
գրութիւն և երկայնակեցութիւն նոցա : Հրա-
տակութիւն Հայոց և Վրաց :

Խոկ յորժամ խմացան այլադէմ ազգն այն ,
թէ կամք է Աստուածոյ տիրել մեղ 'ի վերոց
երկրի . ապա այնուհետեւ զօրաժողով լեալ ,
գնացին 'ի վերայ Պարսիկաց , և առ ին 'ի նոցանէ
փոքր քաղաք մի : Եւ Պարսիկին զօրացեալ ա-
ռին գարձեալ զիւրեանցն և զնացայն :

Եւ ապա գարձեալ ձայն ձգեցին յաղկն

Խորեանց ուր և կային բնակեալ ազգն և տողաց,
և այլ եւս գարձեալ յարձակեցան ՚ի վերաց
Պարսից և յաղթեցին նոցա, և առին զքաղաք
և զամենացն ինչո նոցա :

Եւ ՚ի վերաց այսը ամենայնի՛ գարձեալ հը-
րամնն առ ին ՚ի Վանեն խորեանց որ կոչեցաւ
Զանկը Վան . և յարձակեցան ՚ի վերաց աշ-
խարհին Աղուանից և Վրաց :

Եւ զայս լուեալ թագաւորն Արաց զհամ-
բաւ գալոց Տաթարին , և լընդդէմ նոցա վայ-
սուն հաղպար հեծելով ՚ի գոշտն մեծ , որ կոչի
կոստնն . որ կայ առաջի տերունական բերդին
Եւ յորժամ խմբեցաւ պատերազմն , յայն ժա-
մըն ազգեցութեամբն սատանայի որ հակոսակ
էնա ճշմարտութեան տէրն Մանասագոմոց Հա-
միդաւլոյ անուն՝ յաղագս քինու ինչ ջատեաց
զծին Աթաքակ Խւվանեի զի յայնմ Ժամանա-
կի մեռեալ էր թագաւորն Արաց Լաշեն . և
մնացեալ էր օմա որդի մի Դաւիթ անուն և
գուտար մի Ռւռուլութան անուն . և անկեալ
էր Դաւիթն ՚ի ձեռս Հոռոմոց Սուլտանին , և
կոյր ՚ի բանափ . և քոյր նորա Ռւռուլութան
ուներ զթագաւորութիւնն վերակացութեամբ
Խւվանեի . որոյ Աթաքակ անուանեցաւ :

Խոկ յորժամ էհաս համբաւ գալոց Տաթա-
րին ըստ վերագոյն առացելոց , յայնժամ առ-
եալ Խւվանե զհեծեալ թագաւորութին Վրաց.
և եկն ՚ի Գաղ՝ առ մեծ և խմասուն իշխանն
Վարհամ , որդի Պլու Զաքարէի . և առեալ
դիս զօրօր Խւրովը գնաց ընդդէմ Տաթարին :

Եւ առեալ կորողի և մեծ իշխանն Վարհամ
զաջը թեւն , և խւվանէ զծախոյ , և յորժամ
յարձակեցան 'ի միմանս ոյս ոճիրս զործե-
ցաւ ' (որ զբեցու) 'ի ձեռն անիծելցն Համի-
դաւլոյ :

Իսկ յորժամ ետես աղջն Նետողաց այսպի-
սի երկուակութիւն 'ի նոսա : յայնքամ զօ-
րացեալ յարձակեցան 'ի վերաց Նեծելցն ,
և յանխնայ կոտորեցին զնոսա :

Իսկ մեծ իշխանն Վարհամ տէրն զագայ
առեալ զաջը թեւն՝ մինչեւ յերեկոյն գհաց
կոտորելով զաթարման յանխնայ յարձակմամբ .
մինչեւ առ հասարակ լցաւ դաշտն Սուդամց
կոտորեալ Տաթարով : Եւ ննին Վարհամ իշ-
խանն զագայ լուաւ զկոտորումն թագաւորու-
թեանն . յայն ժամն մեծապէս տրտմեալ և
թողեալ զգործ ոպաւերազմին , դարձաւ յա-
մուրս բերդին խւրաց որ կոչի Քարհերձ : Եւ
ոյս եղեւ 'ի թուականութեանն Հայոց վեց
հարիւր վացաւն և երեք :

Եւ յետ երից ամաց անցանելց դարձեալ
եկն Տաթարն , և էաւ զգանձակ շահասաան .
և յանխնայ կոտորեաց և դերեաց , և դարձաւ
յերկիրն իւր բաղտմաւարաւ և դանձիւք :

Իսկ Ելծէ զի՞նչ նմանութիւն ոնէր առա-
ջին Տաթարն , ասացուք և զայն եւս : Զի ոչ
եկն իբրեւ զմարդ առաջնիքն , որ եկին 'ի վե-
րին երկիրն . այլ էին ահագինք տեսողաց և ան-
ոպատմելիք . զի գլուխն մեծ էր իբրեւ զգոմի-
շու . ոչքերննեղ իբրեւ զծագու . քիթն կարծ

իրրեւ զկատուի . գունչն՝ մառենջ իրրեւ զշան .
մէջքն՝ բարակ զինչ մօջման . ոտնելրն՝ կարձ
զերթ խողի . մօրուս բնաւ խոկ չունեին . տաւ-
լաթ ունեին զառիւծու . ձայնն ճշող զերդ ար-
ծուի . ուր չպատմէր , անդ գտանելր : Կանայ-
քըն իւրեանց ունեին դդականի սուլուլի վե-
րանալի . ծածկեալ շարադուրով դրագի . երե-
սըն լսյն պեւերի սովանմակը գեղով ծեփեին .
իժի նման ճնանեին , և գայլոց պէս կերակրէին
Մահն ՚ի նոսա խոկի չերեւիւր . վասն այն՝ որ
երեք հարիւր տարի ապրէին . այս ցեղ էին ա-
ռաջինքն որ եկին յաշխարհն վերին . և հաց ա-
մենեւին չուտեին :

Դարձեալ այլեւս հրաման առեալ 'ի Առ-
նեն , և եկին երեք գլխաւորք 'ի վերաց Ազ-
ուանից և Վրաց , և առին բազում քաղաքո
և բերդո , և էին անուանիք նոցա միոյն Զա-
ւըրման , երկրարդին՝ Բէնալ , Երրորդին՝ Մու-
լոր . և եղեալ 'ի վերաց բերդերացն հիսար
անհամար հեծելովիք . և առին զառաջինն ըզ-
Շամբաւը հուող առ Գանձակ . որ յառաջ ա-
ռեալ էին . առին զՍագամ , զԲարհերձ , զՏե-
րեւեն . զմեծ գղեկին թագաւորամեստ . զԴարդ-
ման , զԵրքեւանիքն , զՄծբնաց բերդ : Առին և
գործով զամուր գղեակին զՏաւուշ , որ եր աթու-
Սուլուանի . առին զտէրտւնականն և վնոր բեր-
դըն . առին և զԲարն(+) մեծ վարդապետին բա-

(+) Այս յորում նադիքը և ուսուցաներ , ուր չայր
և էլեւելի մէ զարդարեալ . կիրակոս .

զում ընչխեք 'ի լի , և տարան զինքն զիառաւ-
ւոր վարդապետն մեր Վանական՝ ծառայ աշա-
կերտօքն իւրավք : Խոկ երկիրն ամեն 'ի միա-
սին ցաւակից լեալ , և տուն բաղռում գանձու և-
սակիտ , և գնեցին զվարդապետն իւրեանց ա-
շակերտօքն :

Յետ սպառիկ յորժամ խնացան խմառուն
իշխանիքն Հայոց և Վարաց , թէ Աստուած է
տուեալ զօրութիւն և յաղթութիւննոց առ-
նուլ զաշխարհս մեր , ասպա դործ և սէր կա-
պեալ , գնեցին 'ի հեալզանդութիւն Տաթարին ,
և խստացան առլ հարկս այսինքն մալ և թա-
ղար . և ինքեանիք հեծելով գնալ ընդ նօսա ուր
և տանիցին . և հաւանեալ Տաթարին թողին
զիրատրումն և զաւերումն տշխալհին . և ին-
քեանիք գարձուն 'ի տեղիս իւրեանց յերկիրն
Մուղմաց : Բայց թողին զվաաւոր մի Վարժ
բուղց անուն , քակել զամենայն ամուրս երկի-
րին զօր առեալ էին . զօր և քակեցին 'ի հի-
մանց զանառիկ բերդոն զշինեալն 'ի Տաճկաց
բաղռում ծախիւք : Եւ այս այսպէս գործեցաւ

Գ.ԼՈՒԽ Դ.

Ասոց գիսաւոր , վելատին յարձակումն թաթիւ-
րաց , և յետս կաշն յաւերեցոյ ջաշխարին
նուածեացս . և բաժանումն աշխարհաց 'ի
գշխաւորսն :

Յաւուրս յայսոսիկ երեւեցաւ ասուլ մի
դիսաւոր աւուրք ինչ . և գարձեալ ծածկեցաւ :

Անցն եւ 'ի յայս աւտքքս խաւորեցաւ արեգա-
կըն 'ի վեց ժամէ աւուրն մինչեւ ցիննժամն :

Իսկ Երեք դլասաւորքն որ ասացաւ առին
ղաշխարհն Վրաց եւ Ազուանից եւ գարձան յեր-
կիրն Մուղանաց , որ միշտ կանաչ լինի խոսն
ամառն եւ ձմեռն վասն պարարտութեան Երկ-
րին եւ քաղցրութեան օդոյն . եւ անդ կացեալ
աւուրս ինչ , գարձեալ այլ եւս խորհեցան
գոլ 'ի վերաց քրիստոնեից , առ ոչինչ ունելով
եւ համարելով զիստորումն եւ զգերումն քրիս-
տոնեից յաշխարհէն Վրաց եւ Ազուանից : Ուր
եւ զԱնուանի քարն Շմեղաց առին . եւ բիւբք
բիւրուց կոտորեցին 'ի նման . որ եւ թիւ ոչ զօր
կոտորելոցն . եւ զտղայն գերեցին յամենայն
աշխարհէն անթիւ բազմն թեամբ : Եւ այսու-
ոչ յագեցան . այլ գարձեալ խորհեցան գոլ 'ի
վերաց Երկրին , եւ առհասարակ կոտորել զամե-
նայն Երկիրն :

Իսկ նախախնամութիւնն սմենակալին Առ-
առւծոյ ոչ առնէ անտես զյուսսացեալն առ-
նա . զի անարժան խորհուրդս նոցա եւ զանի-
րաւ խափանեաց , եւ զերից դլասաւորացն՝ որ
ասացաւ , զերկումն սատակեաց :

Եւ թէ զի՞նչ խորհեցան , ասասցուք սա-
կուիկ : Երեկոյն արարին խուռաււմայ , որ ասի
Ճողով , եւ խորհեցան կրկին եւս գառնալ 'ի
վերաց կալեալ Երկրին , և առհասարակ կոտո-
րել . և զայս ոչ Երեքն միաբան խորհեցան . այլ
և Երկուքն : Իսկ Չաւրմանն բարի խորհրդով
ասէր 'ի հրամանէ նախախնամութեանն Աստու-

ծայ , բաւական լինել զառերումն և զկոտորումն
աշխարհի . առելով թէ չէն մնան առէ , զերկիք
վաստակեն , եւ զկէսն մեղ տան զապրանացն
զայդւոյ և զարտոյ , և կիոսին ինքեանք ասլրին :

Եւ մինչ 'ի յայս խորհուրդու եին , օրն եւ
ըեկոյացաւ և խուռութայն խափանեցաւ և
'ի քուն մոռնէին , և մինչ լուսացաւ , առ սին
զերկուց գլխաւորն մեռեալ , որք զշարմն խոր-
հեցան . և միւնն էր կենդանիոր զշինութիւն
և դիսաղալութիւն երկրին կամեցաւ , որոյ ա-
նունն էր Չաւրման :

Եւ ապա ելեալ Չաւրմանն վիսյինք բա-
նիստնաց առ մեծ գլխաւորն խորեանց Չանելրդ
Ղանն . և պատմեաց զամենացն խորհեալն զիւրն
և զերկուց գլխաւորացն , զնոցաւ սառակումն
և զիւր կենդանի մնալի 'ի միւնմ գիշերի :

Խոկ Ղայտնն իբրեւ լուսաւ , զարմացեալ ա-
սաց յՉաւրմանն . այն զինչ երկու գլխաւորքն
խորհեցան , չէր հանց Աստուծոյ . վասն այն
յանկարծամահ եղեն : Խոկ դու վասն բարի
խորհրդաց քոց ոչ մեռար . զի Աստուծոյ կամք
է տռնուլ զերկիք և 'ի շնութիւն պահել . և
դնել ասախ կուլընդ հրամանաւ մեր , և տալ
մեղ տղղու և մալ և թաղար և զփշուր : Խոկ
զայնոտիկ որ ոչ հնազանդին հրամանաց մեր և
ոչ տան մեղ հարի , զայնոտիկ սոլանանել և ըդ-
տեղին քակեւ : Որ այլքն որ ըսե՞ն և տեսանի-
ցեն , երկիցեն և ոչ արասցեն այնոէս :

Եւ զայս ասացեալ Ղայտնն ապա հրամաց-
եաց Չաւրմանին դնալ և պահել զուխոն իւր

զոր խորհեցաւ և ասպիրեցաւ 'ի մահուանէ : Եւ
ետ զբարեմիտ կինն իւր զԱյլմանա խաթունն
Չաւրմանին , և անոււանեաց ղեա Չաւրմաղան :
Իսկ Չաւրմաղանն առեալ զբարեաշը և զշար-
հուոր կինն Չանկըդ խոնին զԱյլմանա խա-
թունն : Եկե նսասաւ 'ի Մուղան , որ է ձմերց
Տաթարին հանգերձ հարիւր և առան գլխաւո-
րք :

Եւ ապա արտօրին խուռաւթմայ և ժողով-
մէջ հրամանաւ Չաւրմաղանին , և բաժանե-
ցին զերկիրս 'ի միմեանց վերայ հարիւր և տա-
սըն զլխաւորքն : Արտեալ ընդ երեք մասն
զաշխարհա , բաժին մի զնոսցին ընդ հիւսիսց
կողմէն . և բաժին մի ընդ հարաւ . և բաժին մի
ընդ մէջ երկիրս , որ այժմ ունին դեռ եւս :

Ակ անոււանէք զլխաւորացն որ 'ի մէջ երկի-
րքո մասցին , են ոյսոքիկ . Ասութու նույնն .
որ եր առկր Ղանին , Չաղատայն՝ որ Ղան կոչե-
ցու . և յետոյ Սանիթմայ . միւս ոյլ փոքր Չա-
ղատայ . Բաշու նույնն , որ գրին զլուիս ամե-
նացն զօրացն . Ասար նույնն . Խութմթու նու-
յնն . Թութտու նույնն . Աւգաւթմայ նույնն
խոնայ նույնն . Խուռաւմը նույնն . Խունան
նույնն . Թենալ նույնն : Անգուրագ նույնն :

Կոյնալէս և այս երեքտասան գլխաւորքս
բաժանեցին 'ի միմեանց վերայ զերկիրն Արաց
և Ազուանից լեաւնով և դաշտով . և զիեծ
տուն Չաւրմաղանին բերին 'ի Գանձակ շա-
հատան , որ զառաջինն աւերեալ և յետոյ այլ
շնեցաւ :

ԳԼՈՒԽ Ե •

Հարկատուութիւն իշխանացն Վլաց եւ Ազուանից . եւ Վանական ջարդադեւ Հայոց :

Իսկ մեծ և անհարիկ իշխանեքն Վլաց և Աւղուանից եղեն ընդ հարկաւ նոցա՝ օր կամաւ և որ ակամայ , և տոցին անխափան զամենայն սահմանեալ հարկան , զոր յառաջադոյն գրեցաք . և ինքեանիք ըստ ուժոյ և ըստ կարողութեան իւրեանց հեծելովք գնացին ընդ նոսա 'ի խալան . և առնուին զու հնաղանդեալ քաղաքս և պրերդո աւերելով և գերելով , և կոտորելով անինոց զարս և զիանայս զքահանայս և զկրօնուուրոս . գերելով զսարկաւագունան 'ի ծառացութիւն իւրեանց . կողստուելով զեկե , զեցիս քրիստոնեից աներկեղաբար . և զպատուական նշխարս որբոց և զխառչս և զգիրքս մերկացուցեալ 'ի զարդուց , առ ոչինչ համարեալ ձգեին ընդ վայր : Եւ արդ՝ զոր աղետ և զպատահումն ժամանակիս գրեցից . զքաժանումըն հարց և մարց 'ի յարդւոյն , թէ զսիրել եաց և զմերձաւոր ընտանեաց զխափանումն սիրոյն . զիւրեանց ուղհական ընչիցն առնումն , թէ զգեղեցիկ սովորանացն 'ի հրոյ ծախումն . զմանկաւայն 'ի զիրկոս մարցն զենքեմն , թէ զգեղեցիկ և զխափկանունդ երիտասարդաց և ըզկուսից բոկ և մերկ գերումն :

Վայ անցաւորիս . հարծեմ թէ ամենայնն

յիմոց պարտեայն հանդիպեցաւ . զսր տէրն և արարիչն մեր , այն որ ներող է և երկայնումիտ այց արասցէ հօտի իւրոց , զսր դնեաց պատը- ւակոն արեամին իւրավլ :

Յայսմ՝ ի նեղ և ՚ի գոռն ժամանակիս վայ- լէր իրբեւ զարեդակն առւրբ հոգի վարդապե- տըն մեր Վանական յերկիքն արեւելեան , երկ- րորդ արեւելը անուանեալ էլ լի լուսովլ և անհաս գիտութեամբ ամենիմաստ Հոգւոյն որբոց . զոր երազումերկամբք և աշխատութեամբ ձրի բաշ- խէր զկերակուրն հոգեւոր , այսմերն զբան վար- դապետութեան Հոգւոյն , նմանեալ երկնաւոր վարդապետին Քրիստոսի հեզութեամբ և խո- նարհութեամբ , լուսութեամբ և երկայնմու- թեամբ : Աիզաղ որբոց և որբութեանց խաչի և եկեղեցւոյ . ժամանեղեաց և ժամանարաց , քահանայից և կրօնաւորաց : Առ մեծամեծոն՝ տհարիսւ , առ աղքատոնն և կարօտեալն՝ քաղ- ցըր , առ մեղուցեալն՝ անխակալ , դնելովլ ըդ- գեղ ապաշխարութեանն թեթեւագոյնս , որ- պէս զի կարսղ լինիցին առնել զլուծ ապաշխա- րութեանն , և վերստին նորոգել հոգւովլ եւ մարմնովլ , և կալ հաստատուն՝ ՚ի հաւատո ճըշ- մարիսա , փառաբանիչո և երկրողագուս ամե- նասուրբ Երրորդութեանն :

Կայնակէս և գովիլի աշակերտքն իւր Վար- դան և Կիւրակոս , Առաքեալն և Յովսեփ խա- շանման բաժանեալ զաշխարհն արեւելց ըս- տաւորեցին կենարար վարդապետութեամբ Հո- գւոյն որբոց : Այլ և բազում որդիս ՚ի փառս

ածին ձրի բաշխելով զտիրական և՝ ղլսաչանիշ
դաւազանն նմանեւալ փառաւոր վարդապետին
իւրեանց, կատարելով զտեառն հրամանն թէ
“ Ձրի առիք և ձրի տուք ” . զոր և զիւանս նո-
ցա տացէ Եկեղեցւ ոյ իւրաց Քրիստոս Աստուած
ընդ երկրայն ժամանակս . ամէն :

ԳԼՈՒԽ Զ •

Պատերազմունք և աւերածք Բացու նուխնին
՚ի կարնոյ բացաբ և ՚ի Հոռոմս»:

Ի վեց հարիւր յութուն և ութ թուին
Հայոց զօրաժողով լեալ Բաջու նուխնն գլխաւո-
րըն Տաթարին, եկն ՚ի վերաց Կարնոյ քաղաքի
անթիւ բազմութեամք . և ածեալ ՚ի հեռար
զամիս երկու, առին . և յանխնաց կոտորեցին
և աւերեցին զբարելի և զգեղեցիկ քաղաքն :
Կոյնարէո և զլանորաց երկրին և զհրաշալի ե-
կեղեցիսն անմարդաբնակ տրարին գերելով և
աւերելով : Որոյ Հայոց և Վրաց իշխանքն
առեալ բաղսւմ զբեանս տօնական և մարտի-
րողէք, առաքեալ և ընթերցուած, գործք և
ուկեղիր աւետարանք աննման փարթամութիւ
զարդարած ՚ի շինութիւն և զարդ որդւոց նոր
Սիօնի, ուստի առեալ տարան յաշխարհն ա-
րեւելից, և լցուցին զվանորացն ամենայն զար-
դուք Եկեղեցւոց : Եւ ՚ի վերաց այսր ամենայ-
նի զինի միոյ ամի անցանելոց, գարձեալ այլ
եւս զօրաժողով եղեն աղքն Կետողաց հան-

գերձ Հայոց և Վրաց իշխանոքն , և Եկին ՚ի
վերաց աշխարհին Հոռոմնց անթիւ բաղմու-
թեամբ :

Եւ զվասաւորն զօրուն Բաջու . նուինն յա-
ջողեալ եր ՚ի դործ պատերազմի . ուր և հան-
դիոդէր ընդդիմանալեացն Խրեանց . բաղում
յաղթութիւնու առներ . բայց պատճառ յուզ-
թութեանն էին Հայոց և Վրաց իշխանոքն , որ
լինէին երեսք զառաջինն . և ուժդին բախե-
լով ՚ի թշնամիս յարձակեին . և ապա զինի նո-
ցա Տաթմարն նետիւ և աղեղամբ :

Իսկ յորժամ մայն յերկիրն Հոռոմնց և
լաւ ընդդեմնցա Խիստադադին սուլտանն հար-
իւր հաղարօք , և վաթառն հաղարօք , և եր
որդին մեծին Շալուեի առ Սուլտանն ՚ի վա-
ղուց ժամանակաց : Եւ յորժամ կազմեցան ՚ի
դործ պատերազմին հանդիօդեցան զօրք Տաթմա-
րին և որդին Շալուեի հանդեպ միմեանց ՚ի
Ճախոց թեւն . և մեծայաղթ իշխանոքն Հայոց
և Վրաց ընդդեմ Սուլտանին զօրացն յաջա-
թեւն : Եւ յորժամ սաստկացաւ մարտն . քաջ
և անուանի որդին Շալուեի դարձոց զՏաթմա-
րին , և զբաղումն կոտարեաց ՚ի նոցանե :

Իսկ Վրաց իշխանն Տէրն զադայ , որդին
մեծին ՎարհամայթառնՊլու Զաքարէի Ազրու-
ղայ անունն քաջապէս մարտուցեալ ընդդեմ զօրու-
Սուլտանին , հանդերձ այլ աղաստագունդ զօ-
րօքն Հայոց և Վրաց ոբք ընդնմա , և դարձու-
ցեալ զաջ թեւ զօրաց Սուլտանին , բաղումա-
միրացից և մեծամեծաց զլուխս հատեալ , յոյժ

տրտմեցուցին զԱռւլսոանն : Եւ օրն երեկոյացեալ թողին զգործ պատերազմին , և բանակեցան հանդէս միմէանց 'ի մէջ դաշտավայր տեղացին . որ կայ ընդ մէջ կարնոյ քաղաքի և Երդնկոյին :

Իսկ ընդ լուսանալ միւս այլ աւուրն զուգեցան զօրքն Տաթարին և Հայոց և Վրայ գընալ ընդդէմ Սուլտանին 'ի սրատերազմ : Եւ զըրօքն բազմութեամբ ձիաթող եղեալ 'ի վերայ բանակի Սուլտանին գնացին . և յորժամշատին 'ի տեղի բանակին այլ ոչինչ դտին , բայց միայն զվրաննին բազում ռոճկօք լցեալ . և զվրան Սուլտանին տեսին բազում դանձիւք զարդարեալ ներքոյ և արտաքոյ , և դադանեք կապեալ ինձ առիւծ և յախաղ առ դուրս վրանի Սուլտանին . բանդի 'ի դիշերին յայնիկի փախուցեալ էր Սուլտանն ամենայն զօրօք իւրաքք յերկմը տութիւնէ ամիրացիցն , որ կամէին հնազանդել Տաթարին :

Եւ առեւտը Տաթարին զփախու առ Սուլտանին , կացուցին սակաւ մի 'ի զօրսացն պահարտնը զգուշութեամբ 'ի վերայ վրանիցն առելով թէ խորեւթիւն ինչ է : Եւ այլ բազմութիւն զօրսացն արձակեցան զհետ Սուլտանին . և ոչ կարացին բմբռնել զոք , զի յամնւրս երկրին խորեանց հասեալ էին : Երբեւ գիտացին եթէ ստոյդ փախուցեալ է Սուլտանն Հոռոմնագարաձան յետս զօրք Տաթարին , և առին զամենայն ռոճկիս և զկարասիս նեցա , հանդերձ մեծամեծ գեղեցկաերանդ վրանօքն զօք թողեալ էին

առ ահի Տաթարին, և ինքեանիք վախուցեալ։
Եւ ապա 'ի վաղիւն ուրախութեամբ մեծաւ
յարձակեցան 'ի վերայ աշխարհին Հոռոմնց։
առին զԵրպնկայն յառաջադայն, և թաղին Շա-
հնաց։ Առին զՎեստրիայ և բազում արիւնհե-
ղութիւնս արարին 'ի նմա, վասն ոչ տալց ըդ-
քաղաքն այլ կային ընդդեմ Տաթարին կւուով.
վասն զի բազում հեծեալ կացր բնակեալ 'ի նը-
մա լցեալ ամենայն բարութեամբ, և ոչ տային
զքաղաքն սիրով։ Իսկ Խորամնեդ զօրք Տաթա-
րին ջան եղեալ առին խաբէութեամբ, և առ
հաստրամկ կատորեցին զմեծամնեսն, և զփոքուն-
ողն գերեցին յանինայ ամենայն ընչիւք իւրեանց։
Եւ գարձեալ առին զկօնն և զԱխշորն հան-
գերձ մեծամեծ գեզօք և վանօրայիւք։ Եւ ա-
պա յարձակեցան 'ի վերայ Սեւաստոպոլ և գործով
առին զնառ բայց ոչ կատորեցին զնասա . այլ ա-
ռեալ աւար զինչս նոցա, և զմարդիկն հա-
մորեալ եղին հարկս 'ի վերայ նոցա լուս սովո-
րութեանն իւրեանց մալ և թաղար և թողեալ
Շահնա և զլուաւոր երկրին Հոռոմնց, և ին-
քեանիք զնացին բազում աւարաւ և զանձիւք
և գերեօք, զոր առին յաշխարհէն Հոռոմնց
յերկիրն արեւելց 'ի բնակութիւնս և յուրէ-
գահս իւրեանց։

ԳԼՈՒԽ Է .

Խորհուրդ եւ հարկատուութիւն բարեղացտ
արքային Հայոց Հեթմոյ՝ Թաթարաց :

Իսկ բարեպաշտ և քրիստոսապսակ թագա-
ւորին Հայոց Հեթմում՝ հանդերձ ամենայն իմաս-
տութեամբ լցեալ հարբն իւրով և աստուա-
ծատահ եղբարբքն և իշխանօքն 'ի խորհուրդ
մտեալ՝ հաստատեցին 'ի միտս իւրեանց հեա-
զանդել Տաթմարին և տալ հարկս և խալանս,
և ոչ թողաւը զնասա յաստուածաշէն և 'ի քը-
րիստոնէաժողով Երկիրն իւրեանց . զոր և ա-
րարին իսկ : Վասն զի յառաջադոյն տեսին
զԲացոյն զգլաւաւորն զօրաց Տաթմարին , և հաս-
տատեցին գաշինս սիրոց և հնազանդութեանն .
և ասրո զինի այնորիկ առաքեցին զեղբայր թա-
գաւորին զասպարապետն Հայոց զազարսն Ալմ-
սկատ առ Սային Ղանն (Շահին Խանն) , որ էր
նստեալ 'ի յաթու Չանկըզ խանին : Եւ եր-
թեալ ըստ յաջողելցն Աստուծոյն ետես ըզ-
Սային Ղանն այն յոյժ քրիստոնէասէր և բա-
րեսէր : Վասն այնորիկ ազգն իւրեանց անուա-
նեցին վնաս Սային Ղան . որ է ըստ լեզուին
իւրեանց ազէկ և լաւ Ղան :

Եւ տեսեալ զասպարապետն Հայոց Սային
Ղանն , յոյժ ուրախացաւ վասն քրիստոնէու-
թեան հաւատոյն . և եւս առաւել վասն կո-
րովի և խմաստուն բանիցն՝ զոր Խօսեցաւ աս-
պարապետն Հայոց Սմբատ առաջի նորա . եւ

որսորեալ զնա սղամիշ , և տուեալ մեծ խոռո
լսիս և փայխողսյո ուկիս եւ Տաթար խաթուն
պաւախախուոր . զի այն էր նոցա մեծ սէրն ,
որ զով սիրէին եւ մեծարէին , տային կին 'ի
որսուաւոր կանանցն իւրեանց , և ոյսպէս մեծ
մեծարանօք պատուեալ զագարտովեան Հայոց ,
յուղարկեաց յաշխարհս իւրեանց տուաչի քը-
րիոտուապասկ թագաւորին Հայոց Հեթմաց .
հրամայելով Նմո զնալ ու ինքն և տեսանել
զնա : Զօր տեսեալ բարեպաշտ թագաւորն
Հեթում զագարան եղբայրն իւր զԱմբատ այն-
ովիսի պատուավ պատուեալ և մեծարեալ 'ի
Ղանէն , յոյժ ուրախացաւ յուրախութիւն
մեծ , եւս առաւել ընդ դրեալն վասն ազա-
տութեան երկրիս և վանորացու և ամենայն
քրիստոնէից :

ԳԼՈՒԽ Բ .

Գարձ եւ թոգուարութիւն արբայրիւոյն
Վրաց գաւառի 'ի կաղանաց ջանիս . Քարիտ-
մայ հրամանու , մեծի Ղանին :

Իսկ քաջ և անուանի զօրքն Վրաց ոչ ու-
նեին գլուխ թագաւոր իւրեանց 'ի վաղուց
հետէ , և դուստրն Ատային Ուռուղուքան մա-
հուամբ փօխեցաւ յաշխարհէս , և Ալիքը մնա-
յին անուերունչք իբրեւ զհօտս , որոյ ոչ իցէ
հովիւ : Աղտա 'ի նախախոնամւթենէն Աստու-
ծոյ ընդ միս արկեալ զորդին թագաւորին իւ-

ըեանց գիշաւիթ՝ որ էր 'ի բանտի 'ի չուռմք .
և բմբոնեալ արտ գլխաւորս 'ի զօրացն չուռ-
մաց իշխանքն Վրաց , տարան առ Բաշոյն՝ որ
էր գլխաւոր Տաթարին , և ետուն շարչարանօք
հարցանել զնոսա վասն թագաւոր որդւոցն 'ի աւ-
թայ . և 'ի նեղեցն զնոսա հարցմամք և սաստիկ
զանիւ . որպէս սպարութիւնէ Տաթարին , և
կին 'ի խոսու , և ապացին թէ կայ յերկաթ և
'ի հորի 'ի Ավաստիս :

Եւ ասրո յոյժ ուրախացեալ Վրաց իշխա-
նացն առաքեցին զիմաստուն իշխանն Վարհամ
զանին Գաւդայ հրամանաւ Բացոյն նուինին և
այլ առենոցն զվասարաց Տաթարին . և ետուն
զինի Վարհամն Տաթար գլխաւոր մի ոյլ հար-
իւր ձիաւօրավ . և յուղարկեցին զնոսա մեծ
սիասաթավ 'ի Ավստրիա : Եւ իբրև զնացին ,
զտան կամօքն Աստուծոյ զմագաւոր որդին
Դաւիթ 'ի մ.ծ և 'ի խոր վլրապի . խոկ կամքն
Աստուծոյ սրոհեալ էր զնա կենդանի 'ի խոր
բանափեն . և իբրև տեսմին զօրք Տաթարին և մեծ
իշխանն Վարհամ 'ի հիացման եղեալ վասն կեն-
դանաթեան նորա , ետուն փառս Աստուծոյ :

Եւ էր Դաւիթ որդի թագաւորին Վրաց
Երկայն հասակաւ . և կրովի , զեղեցիկ որակիե-
րաւ և թուխ մօրուօք . լցեալ ամենայն իմաս-
տութեամք և շնորհօքն Աստուծոյ :

Եւ ասրո հանեալ 'ի բանտեն , ագուցին նմա
հանդերձ սրատուականն . և հեծուցեալ յերի-
վարա առին և գնացին յաշխարհն Վրաց : Եւ
յորժամ հասմին 'ի քաղաքն Տիֆլիս , յոյժ ուրա-

Խացան իշխանիքն Վրաց և առեալ հրաման ՚ի
Բաշոյն նուինէն և յԱյլթանա խաթանէն Զա-
ւրբմաղանին (զի ընդ այն առուրս մեռեալ էր
Զաւրբմաղաննեւ կինն ունէր զղանութիւնն), որ
ևս հրաման և հեծեալ զինի մեծ իշխանին Վար-
համայ . և առաքեաց առ մեծ Ղանն : Եւ զը-
նացեալ օգնութեամբն Աստուծոյ և տեսեալ
զՂանն պատմեցին զեղեալ իրան վասն թագաւո-
րորդւոյն . և առին հրաման ՚ի մեծ Ղաննեւ բե-
րին նատուցին զՂաւեթ յաթու հօրի խրաց ՚ի
Տփիսիս : Եւ իշխանիքն Վրաց յօժ ուրախացեալ
անուանեցին զնա Վարհամնեալ թագաւոր . այ-
սինքն Վարհամէդիք թագաւոր : Եւ առ Ժամա-
նակ մի խաղաղացաւ երկիրն Վրաց և Ազուտ-
նից վասն նոր թագաւորին նատելց :

Գ.Լ.ՌԻԽ թ. *

Մահ Զաւրբմացանին : Տ. կոստանդին կաթու-
ցիկոս Հայոց : Պարսն կոուտանդին նախկին թա-
գաւոր Հայոց հայրեն Հեթմոյ : Դաւ.իթ ար-
քայ Վրաց մատնի յիշխանացն խրաց : Մեռա-
նի Վանուկան վարդարեւ :

Խակ Զաւրբմաղանն մեռաւ բարի խորհուլ .
և եթող երկուս որդիս յԱյլթանա խաթանն
կիսջէ խրմէ . անուն միոյն Սիրամնւն , և երկ-
րորդին՝ Բաւրայ : Եւ էր Սիրամնւն բարի ՚ի
մանկութենէ խրմէ սիրող քրիստոնէից և ե-
կեղեցւոյ . և կամօքն Աստուծոյ յաջողեալ ՚ի

դործ սպատերազմի , մինչ զի վասն կարիքաջու-
թեանն՝ Պաներն Ունի սիան անուանեցին զնա
յետ բաղրամյաղթութեանց և սպատերազմաց
Խոկ եղբայր Նորին վասն չարութեան բարուց
իւրոց սպանու . ՚ի Հուլաւու Պաներն :

Յացամ Ժամանակին հանդիսանայր սպայծառ
և առարինի վարուք համայ Աստուծոյ և մարդ-
կան Տէր Կասարնդինն կաթուղիկան Հայոց ,
հանդերձ քրիստոսապատկան թագաւորաւն Հե-
թումաւ , որ և լուսաւորեցին ուղղափառ հա-
ւատով և սպայծառ կարգօք զամենայն եկեղե-
ցիո Հայաստանեաց յարեւելու և յարեւմնւսու
և յամենայն տեղիս :

Խոկ թագաւորահայրն սպարոն Կոստընդինն
հանդերձ այլ ասասուածատուք սրդւովքն եւ
իշխանոքն կայր վառեալ ընդդեմ զօրաց այլ
ազգեացն և թշնամեաց խաչին Քրիստոսի , և
սպահեին յուրախութիւն հանսապաղ զբարե-
ողաշտ և զ քրիստոսապատկան թագաւորն Հայոց
զհեթում , հանդերձ գեղեցիկ և սպատուական
զաւակօքն իւրովք Լեւոնիւ և Թորոսիւ :

Խոկ բարեսէր և գեղեցիկ թագաւորն Վը-
րաց Դաւիթ հանսապաղ իւր սմենայն թագաւ-
որութեամին կայր ՚ի մեծ ուրախութիւն եւ
՚ի գինաբրուս յիւր թագաւորանիստ քաղաքն
Տփիսիս : Եւ յաւուր միում էր մեծ ճաշ եւ
ուրախութիւն սուածի թագաւորին . և սովո-
րութիւն է Վըրաց հանսապաղ սմբարտուանել
և մեծամեծ բանո խոսել :

Խոկ մի յիշխանացն Վըրաց համարեաց ա-

ռաջի թագաւորին զայլ իշխանոն և տասայ զմիւ
իշխանացն հաղար : Եւ կայլը յիշխանացն՝ որ
ունէր հաղար ձիւուր պատերազմով, կայր՝ որ
ունէր հինգ հարիւր . և անկաւ բանս սցո ՚ի
լուր ամենայն թագաւորութեանն, յորժոմ էին
անուշացեալ յուտել և յըմպելն : Եւ յորժոմ
հաշուեցան և համար արարին զօրացն Հայոց
և Վրաց՝ ասացին զիւրեանցն յաղթաղլնել ՚ի
վերաց զօրաց Տամարին . և բաժանեցին ըզ
գլխաւորուն ՚ի վերաց իւրեանց . և այս ոչ թէ
ուղորդ խորհեցան և կամ խօսեցան, այլ առ
կատականս . զի ողարադ և անհօդ էին ՚ի ցու
ւոց ; և այլ թշնամի ոչ դոյր յերկիրն արեւեւ
լից, բայց միոյն Տամարին . որ յամենայն ժամ
գոյին և հարիւր նեղացուցանէին զնլրաց և
զհացոց իշխանքն . յոմանց ուղէին անկի կտաւ .
յոմանց՝ բարց, յոմանց՝ աղէկ շուն և ձի . և
այդովես նեղացուցանէին զնստա զստ ՚ի մալէն
և ՚ի թաղարէն և ՚ի խաղանէն . վասն այնորիկ
խօսեցան զայր, բայց ոչ ուղորդ, այլ ընդ խա-
ղսու և ընդ կատակու :

Խակ մի ոմն յայնցանէ որ անդն կային, նմա-
նեալ Յուղայի մատնչին, դնաց և մատնեաց
Տամարին . զսուտ բանն իրաւ և ուղորդ դար-
ձուցեալ այսպէս ասելով. թէ Վրաց թագաւորին
և իւր իշխանքն խորհեցան դալ ՚ի վերաց ձեր :

Խակ նոցա աւատացեալ սուտ բանին, դար-
ձան ՚ի վերաց աշխարհին յաւորի առեալ զտ-
մենայն ինչը և զիսաշինսն . բայց զիադիկին ոչ
կատորեցին առանց հրամանի մեծ Պանին, և

ըմբանեցին զլթագաւորն և զամենայն իշխանկըն տղի , մինչ 'ի յայն որ զմեծ իշխանն Վրաց զորդի Ամֆաբակ Խւլանէի Աւագ անուն , տարան առ գուրգ գլխաւարին դադալօք . զի ընդ աւուրսն ընդ այնուիկ հիւանդացեալ էր և ոչ կարէր նատիլ 'ի ձիոյ : Եւ թէպէտ այլ իշխանկըն և թօքաւարն շատ խօսեցան , ոչ աւատացին խօսից նոցա . և 'ի գերելց և յառարելց զաշխարհն ոչ դադարէին : Եւ յորժամ տարան զԱւագն դադալօք 'ի գուռն գլխաւորաց Տաթարին , ապա նորա խօսիցն աւատացեալ թողացուցին զաշխարհն 'ի կոտորելց , և արարին խաղաղութիւնուաբեկ և ովորմելի քրիստոնէիցն:

Ընդ աւուրսն ընդ այնուիկ փոխեցաւ 'ի Քրիստոս աւագ և գառաւոր վարդապետն մեր Վանուկոննն , և ուռդ մեծ եթուլ մել . և ոչ թէ միայն մեղ աշոկերտելցոս նմայ , այլ և ամենայն աշխարհիս . որոյ յիշատակն նորա օրէնութեամբ եղիցի . և աղօթք նորա 'ի վերաց ամենայն աշխարհի և ամենայն քրիստոնէից :

ԳԼՈՒԽ Ժ.

Մարախ։ Գլխոհամարը յարեւեցաւ Հեթում արքայ Հայոց գնայ առ Մանկու Ղանն, և մեծորի դատուոց։ Եւթե որդիք եւթե Ղանաց խուց ամբարտուան։ Տ. Ստեփաննոս Ղանահայր գերեթնի Վանաց մարտիրոսանայ։ Հիւանդանաց խուց եցեւնագործութիւնք ՚ի դատձառս նորաց Յաջորիք Յիսուց Միջան որդիք նորա։

Իսկ ՚ի յաւուրսո յայսոսիկ եկն մարախս սատիկ և եկեր զամենայն աշխարհն արեւելից։ Ամենչեւ առհասարակ երկիրս ամենայն յարեւելք և յարեւմնետք ՚ի յահեն զարհուրեալ յԱստուած ապաւինեցան մեծաւ հառաջանօք։ և աղա ողջրմութեամբն Աստուծոյ զերծաւ աշխարհ ՚ի յահագին ցասմանէն։ և ետուն գառա Աստուծոյ ամենակալին փրկողին յայն պիսի պատուհասէն։ Եւ այս եղեւ ՚ի թուականութեանս Հայոց յեւթն հարիւրն (1251)։

Եւ լինի ցասմանս այսորիկ եկն զլիսաւոր մի Տաթար Արլուն (1) անուն հրամանաւ Մանկու Ղանին։ և համարեաց զերկիրն արեւելից վարն հարկի ։ և առնուին այնու հետեւ զհարկն ՚ի գլխաթուոյ մարդկանն ։ քանի որ գրեալ լենէր ՚ի գաւթարն (2) ։ և այսպէս այլ աւերեցին զաշխարհն արեւելից ։ զի ՚ի մի փոքր գեղն սիսուն մարդ համարէին ։ կամ երեսուն ։ ՚ի տասն

(1) ՄԴ օ՛կ ։ Արդուն։ (2) Հօմաք ։

և հիմով տարեկանէն 'ի վերն զամենն համարէին մինչ 'ի վացառւն տարեկանն . և յամէն դլայ որ համարէին վացառւն սպիտակ առնուին . և թէ ոք փախչէր կամ թաքչէր , յորժամ ընթանէին կաղէին անողում ձեռս 'ի յետս և գալո՞ր գաւաղանօք ծեծէին . մինչ զի մարմինն ամենայն տրորէր և յարենէն շաղախէր . և ապա անողորմաբար զիկատաղի շներն իւրեանց , զոր սովորեցնցեալ էին ուտել միս մարդոց , 'ի ներս թողուին և ուտել տային զտառապեալ և զջունեառոր քրիստոնեայսն :

Իսկ քրիստոսապատկ և բարեպաշտ թագաւորն չեթում , իբրեւ լուաւ զայտ ամենայն բարկութիւնս որ գործեցաւ 'ի վերին աշխարհն արեւելից , սպա վասն սիրոյ քրիստոնէից եւս առաւել վասն իւր սեպհական երկիրո , գնաց բազում գանձիւք առ Մանկու Ղանն , և հոգաց չժողուլ յերկիրս իւր զայտովախ բարկութիւնս : Եւ յորժամ հասաւ առ Ղանն . կամօքն Աստուծոյ մեծարեցաւ 'ի Ղանէն : Եւ արարեալ Ղանն մեծ սրատիւ և հարկիս թաղաւորին չայցոց , և զամենայն բանն նորա հոգաց ըստ կամաց նորա . և գարձոյց մեծ ուրախութեամբ յաշխարհն իւր :

Իսկ զինի սյառիկ և հասանելոյ թուականին չայցոց յեւթն հարիւր և 'ի վեցն , եկին յարեւելից ուստի մեծ Ղանն էր՝ եւթն Ղանի որդիք . ամէնն դռւման մի հեծելով . և մի դռւմանն էր երեսուն հաղար : Եւ են անուանք նոցա այս , առաջին և մեծն 'ի նոցանէ չոյլա-

ւու . որ էր եղբայր Մանկու Ղամեին , երկրորդ
խուլն՝ որ և զինքն եղբայր Աստուծոյ ասէր և
ոչ ամաչէր . Երբորդն՝ Բալախեն . չորրորդն՝
Տութարն . հինգերորդն՝ Ծագուդարն . եւթներորդն՝
Բարձրագանն . եւթներորդն՝ Բարձրագանն . ի պահ
որ եկին ամէնն կառօք եկին . և կառօք շընէ-
ին . մինչ զի զեւառն և զբարւա հարթեին աշ-
խարհովն արեւելից վասն հեշտ գնալոց կառա-
ջըն և սայլիցն :

Խոկ այն գլխաւորն որ զինքն եղբայր Աս-
տուծոյ ասէր , եկին ընդ մէջ երկրին և կոխեաց
անողորմաբար զտառապեալ բրիստոնն այսն , և
զփայտեայ խաչ ուր և գտանէին 'ի Ճանապար-
հըս և 'ի լերինս կանգնեալ , զամէնն այրէին ,
և ոչինչ իրօք ոչ յագենային . այլ և զվանաբացն
որ կային յերկիրն ուր և գտանէին առաւել
եւս կոխէին ուտելով և ըմպելով . և զզատ-
ռական քահանայն կախէին և ծեծէին անո-
զրումաբար :

Խոկ գլխաւոր մի 'ի խուլն հեծէլէն զը-
նաց 'ի վանք մի որ ասի Գերեթին , և էր հայր
վանիցն ալեւ որ և ծեր յոյժ ընտրեալ և սուրբ
և առաքինի և ամենայն վարուք և բարի դոր-
ծով . առաքեալ Յտելիաննս անուն . և նա յոր-
ժամ և տես զգինաւոր Տաթարն որ գնացր առ-
նա 'ի զանցն , էաւ դինի ամանով ինչ , և զը-
նաց ընդգէմ Տաթարին , և բռնեաց տղղու ,
որպէս սովորութիւն է Տաթարին : Եւ աղա

յետ այնուրիկ տարեալ՝ ի վանքն և նստուցեալ
հանդերձ այլ հեծելօքն, որ կային զինի գլխա-
ւորին, և զենեաց ոչխար. և երաց այլ զինի,
և յագեցոյց ուտելով եւ ըմոլելով զամենն.
մինչ զի բռին կարեին գագարել՝ ի ձիանն. և
յերեկոյն արբեալ գնացին՝ ի տունս իւրեանց.
զի հուսպ առ վանքն էր տուն Տաթարին:

Իսկ յորժամ հասին՝ ի տունս իւրեանց և
նեղցին զգիշերն, ընդ առաւոտն զարթու-
ցեալ տեսին զգլխաւորն հիւանդ յոյժ, և յոր-
ժամ հարցին թէ վասն ի՞նչ պատճառի է հի-
ւանդութիւնդ, ասաց զլիստորն, թէ երեցն
դեղեաց զիս յերեկոյն. և էր անմեղ երեցն.
բայց վասն խարբ և անցագ ըմոլելոյն իւրեանց
այնովէս հանդիպեցաւ: Եւ առ ժամայն յու-
ղարկեցին և կապանօք տարան զհրաշալի ծերն
զհայրն Ստեփաննոս. և յետ շատ հարց և փոր-
ձի, և նոցա ոչ տւատալոյ, ՚ի չորից կողմանց
փայտ ցցեցին, և սլրկեցին անողորմաբար զան-
պարտն՝ ՚ի յայն բանն՝ ՚ի գետնոյն բարձր իրեւ-
կանդնուա չափ, և ասզա հուր վառեալ՝ ՚ի ներ-
քց սլրեցին և խորովեցին զամենայն մարմինն
նորա, մինչև աւանդեաց զհոգին հրաշալի ծերն
Ստեփաննոս, և յայտնուալէս նշան և սիւն լու-
սոյ տեսին՝ ՚ի վերաց երանմելի հօրն Ստեփաննո-
սի, որ այնովէս անմեղ և ՚ի զուր նահատակե-
ցաւ, և ընդ սլրոց մարտիրոսացն պսակեցաւ:

Իսկ պեղծ և անողը այլ զլիստորն այն զատ
՚ի ցաւէն որ սւնէր, հարեալ՝ ՚ի դիւէ, մինչ զի
կատաղեալ ուտեր զպեղծ մարմինն իւր, և այն-

ոլիսի չարչարանօք և դառն հարուածովք սաւակեցաւ . նոյնաղէս և ամենայն բանակն անկան 'ի չար ախտ , և բազումք սատակեցան 'ի նացանէ : Եւ թէպէտ այս այսպէս գործեցաւ , նոքա ոչ վախէին յԱստուծոյ . այլ յամառեալք հանապաղ զիսղձի և զդաւն արտասուաց բանագործէին . զի մեծ գլխաւորն իւրեանց խուն այն՝ որ ամբարտաւանեալ նման և Եղբայր Աստուծոյ ասէր զինքն , անկաւ նա 'ի ցաւ նկրառոյ . և այն ցաւին սրատճառաւ անպատճելի խեղճ և ողորմ բան գործեցաւ : Զի գնացին անհաւատ ջնուտ մի բժիշկ դաւն , և բերին առ խուն , և յորժամ ետես զցաւ նորա անօրէն և սուտ բժիշկն այն , ասաց գեղ ցաւին . զշեկ տղայի փորն կենդանաւոյն ձեղքել և գնել զան 'ի փոր տղայոյն : Եւ նոյն ժամանյն հանեալ հեծեսլ յերկիրն , յանկարծակի մտանէին 'ի գեղանն քրիստոնէից և աւնուին զտղայն 'ի փողոցէն . և գայլու պէս փախուցանէին . և ծընողք մանկանցն զինի գնային ձիչ և աղաղակ բարձեալ դառն և ողորմ արտասուօք . և ոչ կարէին թափել . այլ յետո դարձեալ գնային ողորմելի սրտով 'ի տունս իւրեանց . եւ թէ բռնադատեալ խլէին զմանկունան , յօյնժամն նետաձիգ լինէին 'ի ծնողս մանկանցն , և այսպէս ողորմելի բանս եղեւ 'ի ձեռն անօրէն ջնտին . մինչ զի յերեսուն տղայն հասաւ թըւով որ ձեղքէին զփորն , և ո՛չ լսւացաւ : Այլ իբրեւ դիտաց անօրէն խուն թէ այնչափ խեղճ քըս գործեաց և ոչինչ օգտեցաւ , ասկա յետոյ

բարկացեալ վասն խղձի տղայացն , հրամայեաց
բերել զջհուտ հեքիմն . և իւրեան առաջի
ձեղքել զփորն և ընկենուլ շանց . և առ ժա-
մայն արարին զհրամայեալն : Բայց ինքն խուլն
յետոյ այլ սատակեցաւ չար մահուամբ , և նրա-
տաւ ՚ի տեղի խուլն Միղան անուն որդին իւր

ԳԼՈՒԽ ԺԱ •

Առումն Պացտատայ եւ . գերութիւն խաշիփա-
յին : Անձնատուր չինի եւ . քացաքն Մարտիրա-
սաց : Աջ սուրբ առաքեցոյն Բարիկուցիմէոսի :

Յետ այսորիկ արարին ժողով մեծ հին և
նոր հեծելոց և վրաց և չայոց հեծելոյն , և
անթիւ բաղմութեամբ գնացին ՚ի վերայ Պաղ-
տատ քաղաքի . և յորժամ հասին ՚ի տեղին ,
առ ժամայն առին զբաղսպն մեծ և անուանի
զՊաղտատն , լուալ բաղում մարդովք և պատ-
ուական գանձիւք և անթիւ ոսկեով և արծա-
թով . և յորժամ առին , յանխնայ կոտորեցին .
և գերեցին զբաղսումն , և լցան առ հառարակ
հեծեալն ամենայն պատուական հանդերձիւք
և խալիփատի ոսկեով , ըմբռնեցին և զխալի-
փայն զտէրն Պաղտատայ իւր ամենայն գան-
ձիւքն , և բերին առաջի չուլաւունին գիրացած
և սոնքացած . և յորժամ ետես չուլաւունն
հրամայեաց . թէ դու ես եմ . և պատա հրամայեաց գը-
նիլ ՚ի բանտի զերեք օր անհաց և անջուր . և

յէտ երեք աւուրին հրամայեաց բերել առաջի
խւր , և եհարց Հուլաւունն զխտվիսայն , թէ
ի՞նչ ցեղ կաս . և նա ցասմամբ պատասխանի ա-
րար , իբր թէ վախեցնելով զՀուլաւուննասէ .
այդ է ձեր մարդութիւնն , որ ես երեք օր յա-
նօմի կենամ . զի յառաջագոյն աստցեալ էր խա-
լիսայն ցքաղաքացինն թէ մի վախէք . թէ լի-
նի , ու Տամարն դայ , զՄահմետի դրօշենն ՚ի
գուրս բերեմ , որ Տամարին հեծեալն ամեն
անկցի և . մէք առցրիմք . և զայսըս եալ էր Հու-
լաւունն . և յոյժ բարկացեալ . և ապա հրամա-
յեաց Հուլաւունն , տասլաղ մի կարմիր սոկի
բերել և դնել առաջի . և յորժում բերին , ա-
սաց խալիսայն , սյս ի՞նչ է . ասաց Հուլաւունն
թէ սոկի է , կիր , որ քաղցգ և Տարաւդ ան-
ցանի , և կշտանաս : Ասաց Խալիսայն . թէ սո-
կւով ոչ ասղրի մարդն . այլ հացով և . մոռվ և
գինւով : Ասաց Հուլաւունն ցխալիսայն . երբ
գիտես զայդ , որ մարդն չոր սոկւով չապրի ,
այլ հացով և . մոռվ և գինւով . դու այդչափ
սոկի էր չուղարկեցիր ինձ ընդդէմ . որ ես չէի
եկեալ , ու զքո քաղցրո աւերեալ , ու զքեկէ
կալեալ . ու դու քեղ մնհոգ նստեալ էիր կե-
րեալ և խմեալ : Եւ ապա հրամայեաց Հուլա-
ւուն զօրացն սոխւք տալ և . այնողէս սպանանել
զխտվիսայն Տաճկաց : Եւ գնացին բաղում դան-
ձիւք և աւարաւ յաշխառհալ արեւելից :

Եւ 'ի գով ամին եկին 'ի վերայ Մուխարիչ
նին , և ոչ կարացին առնուլ զնա . զի ամրագոյն
շինեալ էր զնա սուրբն Մարտութայ քաղաք մաք-

տիրոսաց, և ամենայն սրբոց ժողովնեաց նշխարս
և եղ ՚ի նմա . և ամրագոյնս սրբազնեաց զնա ,
և անուռանեաց զնա քաղաք Մարտիրոսաց . որ
մինչև ՚ի ժամանակ Տաթարիս , այլ ոք ոչ կա-
րաց առնուլ զնա առանց սիրոյ : Եւ ասրա եր-
կայնամիտ զօրք Տաթարին ՚ի հեսար արկեալ ,
մինչ ՚ի սովոյ կերան ամենն զ՚իմեանս . և ա-
ռէին թէ իշու զլու և մի եղեւ յերեսուն զրամ :
և այսպէս նեղութեամբ ՚ի հեսար արկեալ զե-
րիս ամս կալան դքաղաքն Մարտիրոսաց . որ և
Հոյոց զօրքն որ կոյին ընդ Տաթարին բազում
նշխարս գտեալ ՚ի սրբոցն տարան յաշխարհն
իւրեանց :

Իսկ մեծ իշխանն Հոյոց թաղեադին անուն
յաղդէն Բաղրատունեաց ըմբռնեալ երեց մի
Ասորի և ՚ի խոստ ածեալ , եգիստ զո՞ջ օրբոյ
տաւաքելոյն Բարդու դիմէոսի . և տարեալ մեծաւ
ուրախութեամբ յաշխարհն իւրեանց յարեւ ելք
և եղ ՚ի վանս իւր : Եւ յետոյ հարկեալ ՚ի մեծ
իշխանէն Արծրունեաց՝ որ ասի Սագուն անուն ,
և առնմայ . և առեսուլ Սագունն աէրն Հաղբատայ
մեծ և հաշակաւոր սրբոյ ուխտին , եղ զուրբ
աջն Բարդու դիմէոսի առաքելոյն ՚ի սուրբ ուխտն
Հաղբատ . և է անդ ստուգապէս :

Գ.ԼՈՒԽ ԺԲ.

Նատի Ղան Հու-շաւուն հրամանաւ. Մանկաւ.
Ղանին, անհնացանդութիւն եւ դատիծ չորիցն՝
յեւթանց որդւոց եւթն Ղանացն. կրկին շմ-
բիշք եւ ըմբշամարտ :

Իսկ եւթն Ղանի որդիքն որ եկին և առին
ՂՊաղտատ քաղաք, և լցան բաղում գոնձիւք
ուկուլ և մարդարտով, ոչ հնազանդէին միմեանց,
այլ կոյք ամենայն գլխաւոր իւր սրտովին մեծ,
և անասախ աւիրէին և կոխէին զաշխարհն ա-
րեւելից :

Իսկ մեծ իշխանն և անուանի 'ի նոցանէ՛ ո-
րում անուն էր Հուլաւու, և էր ոտ եղբայր
Մանկու Ղանին, որպէս յառաջագոյն ասացաւ:
Սա յուղարկեաց առ Մանկու Ղան եղբայրն
իւր 'ի բուն արեւելք, և այսպէս պատու իրեաց
գնացելոցն. թէ մեք Եկաք այս եւթն գումանու-
դլուխք Աստուծոյ և ձեր ուժով, և զհին հե-
ծեալն զթեմայշիքն հանաք աստի, և գնացաք
առաք զՏաճկաց քաղաքն զՊաղտատ, և շատ
իրօք դարձաք Աստուծոյ և ձեր ուժով: Հէմ
այլ ի՞նչ հրամայէք մեզ, թէ այս յեղ անասախ
և անգլխաւոր կացցուք, այս աշխարհս աւիրի,
ու Զանկը Ղանի, հրամանիքն չլինի. զի նա հը-
